ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ք. Երևան 11.07.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/22

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.06.2017թ. թիվ 03/27-1/10923-17 գրությամբ Ա/Ձ Հայկ Գալստյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.06.2017թ. թիվ ԴՎԱ/1689 գրության հիման վրա, 16.06.2017թ. թիվ 03/27-1/10923-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է Ա/Ձ Հայկ Գալստյանին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **<u>Ա/Ձ Հայկ Գալստյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Ա/Ձ Հայկ Գալստյանը Խորհրդին ուղղված 21.06.2017թ. գրությամբ հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) հայտերի բացման նիստից հետո որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից Ա/Ձ Հայկ Գալստյանը պետք է երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացներ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մասնակցի կողմից չեն ներկայացվել համապատասխան փաստաթղթերը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է Մասնակցի հայտը, որի վերաբերյալ ծանուցել է 30.05.2017թ.

Ա/Ձ Հայկ Գալստյանը նույն օրը գրավոր դիմել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և տեղեկացրել, որ Ընկերությունը հանձնաժողովի նիստից հետո հեռախոսային կապ է հաստատել Ընթացակարգի գնումների համակարգողի հետ՝ ճշտելու նպատակով, թե Մասնակցին երբ կուղարկվի համապատասխան ծանուցումը, որին ի պատասխան գնումների համակարգողը հայտնել է, որ այն ընթացքի մեջ է և պատրաստ լինելուն պես Մասնակիցը կծանուցվի:

Մինչև հայտի մերժման վերաբերյալ նամակը ստանալը՝ Մասնակցի էլեկտրոնային փոստին չի ստացվել հայտերի բացման նիստի արձանագրությունը, իսկ պետական գնումների կայք (gnumner.am) մուտք գործելը մի քանի օր շարունակ գրեթե անհնար է եղել:

Մասնակիցը գրությամբ հայտնել է, որ որևէ խախտում չի արել, և որպես ապացույց կարող են ստուգվել իր էլեկտրոնային փոստում առկա բոլոր փաստաթղթերը և համոզվել որ որևէ ծանուցում իր կողմից չի ստացվել:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 23.06.2017թ. ժամը 10:15-ի և 04.07.2017թ. ժամը 10:30-ի նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի

մասնակցությունը, ով պնդել է վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը, ինչպես նաև հայտնել, որ Armpes համակարգի միջոցով ստացել է համապատասխան ծանուցում, որը սակայն նկատել է ուշացումով, իսկ իր էլեկտրոնային փոստին որևէ ծանուցում չի ստացել:

3. <u>Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 06.06.2017թ. թիվ ԴՎԱ/1689 գրությամբ հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո սահմանված կարգով՝ հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել են երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներից՝ Ա/Ձ Հայկ Գալստյանը պահանջվող փաստաթղթերը չի ներկայացրել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Մասնակցի հայտը մերժվել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 23.06.2017թ. ժամը 10:15-ի և 04.07.2017թ. ժամը 10:30-ի նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>4. ՍՑ-ԱՄ-2017/22 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2017/22 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով Ա/Ձ Հայկ Գալստյանը հայտ է ներկայացրել:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.04.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Հայկ Գալստյանը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից՝ Ընթացակարգի 3-4-րդ չափաբաժինների մասով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 2-րդ կետով սահմանված կարգով Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 20.05.2017թ. ծանուցել է Ա/Ձ Հայկ Գալստյանին՝ առաջարկելով համապատասխան ծանուցումը ստանալուց հետո հրավերով սահմանված ժամկետում և կարգով a.amiryan@mil.am էլեկտրոնային փոստին ներկայացնել հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը (հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը):

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.05.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ Ա/Ձ Հայկ Գալստյանի հայտը մերժվել է՝ այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

5. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 26.06.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/[1160218]-17 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով հայտնել, թե արդյոք ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/10» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Ա/Ձ Հայկ Գալստյանին սահմանված կարգով Armeps համակարգի միջոցով ուղարկվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը

ներկայացնելու վերաբերյալ համապատասխան ծանուցումը և նշված ծանուցումն ստացվել է արդյոք Ա/Ձ Հայկ Գալստյանի կողմից, թե ոչ:

6. Ի պատասխան Խորհրդի վերը նշված գրությանը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 27.06.2017թ. թիվ 03/26-2/[1160396]-17 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/10» ծածկագրով ընթացակարգի փորձաքննությունը ցույց է տվել, որ Պատվիրատուի կողմից Ա/Ձ Հայկ Գալստյանին 20.05.2017թ. Armeps համակարգից էլեկտրոնային ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ուղարկվել է էլեկտրոնային ուղերձ (կից ներկայացվել է):

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.06.2017թ. թիվ 03/27-1/10923-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.06.2017թ. թիվ ԴՎԱ/1689 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում սպանձնած պարտավորություն, որը հանգեցրել է*** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով

նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 7-րդ կետի 7.5-րդ ենթակետի 1-ին պարբերության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ոչ ավտոմատ եղանակով ծանուցում է հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակցին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող սույն հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը: Առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ a.amiryan@mil.am, է ուղարկում սույն ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Սույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած Մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած Ա/Ձ Հայկ Գալստյանը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.04.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 3-4-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 2-րդ կետով սահմանված կարգով Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 20.05.2017թ. ծանուցել է Ա/Ձ Հայկ Գալստյանին՝ առաջարկելով համապատասխան ծանուցումը ստանալուց հետո հրավերով սահմանված ժամկետում և կարգով a.amiryan@mil.am էլեկտրոնային փոստին ներկայացնել հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, որոնք սակայն Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.05.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ Ա/Ձ Հայկ Գալստյանի հայտը մերժվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ Խորհուրդն արձանագրում է, որ Ա/Ձ Հայկ Գալստյանը «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/10» ծածկագրով գնման գործընթացի շրջանակում թույլ է տվել ստանձնած պարտավորության խախտում, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության 27.06.2017թ. թիվ 03/26-2/[1160396]-17 գրության, սահմանված կարգով Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ուղարկվել է Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված՝ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը սահմանված ժամկետում ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ ծանուցումը, որը ստացվել է Ա/Ձ Հայկ Գալստյանի կողմից, սակայն Մասնակցի կողմից սահմանված կարգով գնահատող հանձնաժողովին չեն ներկայացվել համապատասխան փաստաթղթերը:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ Ա/Ձ Հայկ Գալստյանի կողմից խախտվել է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն: Միևնույն ժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մասնակցի կողմից խախտվել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած մեկ պարտավորություն, Խորհուրդը գտնում է, որ Ա/Ձ Հայկ Գալստյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.06.2017թ. թիվ 03/27-1/10923-17 գրությամբ Ա/Ձ Հայկ Գալստյանին (ՀՎՀՀ՝ 40528506) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**